2015 Հայաստանի տնտեսական զեկույց

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Published by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Զեկույցը մշակվել է՝ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (GIZ) աջակցությամբ:
«Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում:
Հեղինակային խումը համագործակցել է՝ ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2015

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (EDRC)

ԱՊՐԻԼԻ 15, 2016

ԵՐԵՎԱՆ, ՀԻԼԹՈՆ ՀՅՈՒՐԱՆՈՑ

1) ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ՊԱՏԿԵՐԸ

- Իրավապայմանագրային դաշտ
- Տրանսպորտ և փոխադրումներ
- Էլեկտրաէներգիա և առևտուր
- Ներդրումներ
- Զբոսաշրջություն

ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԴԱՇՏԸ

Առկա են զանազան ոլորտները ընդգրկող շուրջ 80 միջազգային պայմանագրեր, համաձայնագրեր և հուշագրեր

- «Բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության մասին» պայմանագիրը (2001թ.)
- Տարանցիկ փոխադրումների հիմնական սկզբունքների մասին (1993թ.)
- Երկաթուղային փոխադրումների համակարգման մասին (1998թ.)
- Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին (1999թ.)
- Գիտատեխնիկական համագործակցության մասին (1998թ.)
- Զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին (2014թ.)
- Ազատ առևտրի մասին (1998թ.)

Հայաստանը և Վրաստանը ԱՀԿ անդամ պետություններ են

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Բեռնաշրջանառության տրանսպորտային սխեմաները.

- **Ռուսաստան, ԱՊՀ, Եվրոպական և Ամերիկա մայրցամաքի երկրներ ձգվող սխեմաներ**
  - **Փոթի և Բաթումի նավահանգիստներ**
  - **Վրաց-ռուսական Վերին Լարիս անցակետ**
  - **Վրաց-թուրքական Սարփի, Վալե և Կարծախի անցակետեր**

- **Հեռավոր Արևելքի, Միջին Ասիայի և Արաբական երկրներ ձգվող սխեմաներ**
  - **Բանդար Աբբաս (Պարսից ծով)**
  - **Իրան - Թուրքիա – Վրաստան սխեմա**

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Գազատարը և բարձրավոլտ էլեկտրագծերը.

- **«Հյուսիս-Հարավ» գլխավոր գազատարը, որով Հայաստանին Ռուսաստանից բնական գազ է մատակարարվում:**
- **Հայաստանի և Վրաստանի էներգահամակարգերը միացված են բարձրավոլտ մի քանի էլեկտրագծերի միջոցով, որով իրականացվում է էլեկտրաէներգիայի տեղափոխում:**

ՏՐԱՆՍՊՈՐՏ ԵՎ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Վրաստանի դերը Հայաստանի բեռների և ուղևորների փոխադրման առումով, տոկոս



Աղբյուրը՝ ՏԶՀԿ գնահատականներ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանը էլեկտրաէներգիա արտահանող երկիր է
(ընդամենը արտահանման 5-6 տոկոսը)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ և ՏԶՀԿ հաշվարկներ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանից արտահանվող էլեկտրաէներգիան ըստ երկրների (տոկոս)



Աղբյուրը՝ Միջազգային առևտրի կենտրոն և ՏԶՀԿ հաշվարկներ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Վրաստան ներմուծվող էլեկտրաէներգիան ըստ երկրների (տոկոս)



Աղբյուրը՝ Միջազգային առևտրի կենտրոն և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Վրաստանի արտահանման դինամիկան (մլն դոլար)

Վրաստանի ընդհանուր արտահանումը



Վրաստանի արտահանումը Հայաստան



Աղբյուր՝ ՎԱՎԳ, ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Վրաստանի արտահանման խոշոր գործընկերները
(վերջին 2 հնգամյակների տվյալներ)

	2005-2009			2010-2014		
	Ծավալ, մլն դոլար	Երկրի դիրք	Կշիռ, տոկոս	Ծավալ, մլն դոլար	Երկրի դիրք	Կշիռ, տոկոս
Ընդամենը	**5,663**		**100.0**	**12,011**		**100.0**
Ադրբեջան	679	2	12.0	2,564	1	21.3
Հայաստան	**437**	**3**	**7.7**	**1,252**	**2**	**10.4**
Թուրքիա	906	1	16.0	1,006	3	8.4
ԱՄՆ	373	5	6.6	902	4	7.5
Ուկրաինա	406	4	7.2	751	5	6.3
Ռուսաստան	325	7	5.7	583	6	4.9
Բուլղարիա	355	6	6.3	548	7	4.6
Չինաստան	39	8	0.7	206	8	1.7
Ընտրվածներ	**3,521**		**62.2**	**7,811**		**65.0**

Աղբյուր՝ ՎԱՎԳ, ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Վրաստանից Հայաստան արտահանված խոշոր ապրանքատեսակները (մլն դոլար)

	Ապրանքախումբ	2001	2005	2010	2014	2014, կշիռ
8703	Թեթև մարդատար ավտոմոբիլներ	0.1	5.9	54.4	129.3	44.9%
3102	Պարարտանյութեր	1.8	4.9	2.7	12.6	4.4%
1001	Ցորեն եւ մեսլին	1.3	3.5	5.3	12.4	4.3%
2304	Սոյայի յուղի զտումից ստացված մնացորդներ	0.0	0.0	3.6	8.8	3.1%
8704	Բեռնափոխադրող տրանսպորտային միջոցներ	0.0	1.2	8.2	8.5	3.0%
2716	Էլեկտրաէներգիա	0.0	0.0	3.1	7.5	2.6%
1005	Եգիպտացորեն	0.0	0.4	2.5	7.2	2.5%
4410	Փայտատաշեղային սալեր	0.0	0.0	5.0	6.2	2.1%
6809	Արտադրատեսակներ գիպսից	0.0	0.0	0.9	5.9	2.1%
3004	Դեղամիջոցներ	0.4	1.0	7.0	4.8	1.7%
2202	Հանքային և գազավորված ջրերը	0.0	1.0	3.0	3.6	1.2%
Ընդամենը Հայաստան արտահանում		**12.5**	**39.6**	**160.2**	**288.2**	**100%**

Աղբյուրը՝ Միջազգային առևտրի կենտրոն և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանից Վրաստան արտահանման դինամիկան
(մլն դոլար)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Միջազգային առևտրի կենտրոն և ՏԶՀԿ հաշվարկներ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՌԵՎՏՈՒՐ

Հայաստանից Վրաստան արտահանված խոշոր ապրանքատեսակները (մլն դոլար)

		2001	2005	2010	2014	2014
701090	Ապակե տարրաներ	0.0	1.1	**11.1**	**12.9**	19.5%
252329	Ցեմենտ	0.1	**7.8**	**2.4**	**4.4**	6.7%
392330	Պլաստմասսայից շշեր	0.0	0.0	3.1	4.2	6.4%
240220	Սիգարետներ	0.0	0.1	**1.4**	**4.1**	6.2%
271600	Էլեկտրաէներգիա	5.8	10.7	0.0	2.9	4.4%
300490	Դեղամիջոցներ	0.2	0.2	1.9	2.6	4.0 %
220860	Օղի	0.0	0.1	0.1	2.6	3.9 %
090121	Բոված սուրճ	0.0	**3.1**	**3.5**	**1.6**	2.5 %
391620	Ձողեր, կաղապարաձողեր և այլ (պոլիմերներից)	0.0	0.0	0.3	1.5	2.2 %
160100	Երշիկներ և համանման մթերք	0.0	0.0	0.4	1.4	2.1 %
220710	Էթիլային սպիրտ	0.0	0.0	0.3	1.3	2.0 %
482390	Թուղթ և ստվարաթուղթ	0.0	0.0	0.0	1.3	2.0 %
180690	Շոկոլադ և դրանից արտադրատեսակներ	0.0	0.1	0.2	1.2	1.8 %
060290	Կենդանի բույսեր	0.0	0.0	0.0	1.1	1.7 %
392590	Շինարարական դետալներ պլաստմասսայից	0.0	0.0	0.2	0.8	1.3 %
Ընդամեը ընտրվածներ		**6.1**	**23.1**	**24.9**	**44.0**	**67%**
Ընդամենը Վրաստան արտահանում		**11.9**	**34.1**	**48.2**	**65.9**	**100%**

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Միջազգային առևտրի կենտրոն և ՏԶՀԿ հաշվարկներ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

- «Ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագիր (1996թ):
  - Ստանդարտ գործիք է ներդրումների փոխադարձ պաշտպանության և խթանման,
  - ՀՀ-ն ունի մոտ 41 նմանատիպ համաձայնագրեր
- «Եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը:
  - 1997-ին ստորագրվել է և 2000-ից ուժի մեջ է մտել
- Փոխադարձ ներդրումների փաստացի ծավալները չափազանց փոքր են:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

- Վրաստանից Հայաստանում ներդրումներ գրեթե չեն իրականացվում (2014-ին 24 հազար ԱՄՆ դոլար, իսկ նախորդող 10 տարիներին՝ ավելի քիչ):

- Հայաստանից Վրաստանում ներդրումները 2014-ին կազմել են 13 մլն ԱՄՆ դոլար կամ ընդամենի 0.7%-ը (նախորդող 10 տարիներին՝ մոտ 43 միլիոն ԱՄՆ դոլար):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- Զբոսաշրջությունն առանձնահատուկ և կարևոր ոլորտներից է:
- Երկու երկները ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ԶՀԿ) անդամ են:
- 2014թ. ստորագրվել է «Զբոսաշրջության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր:
- Ճամփորդական ծառայությունները 2 երկրում էլ բավականին մեծ կշիռ ունեն ծառայությունների արտահանման և ՀՆԱ-ի նկատմամբ:
- Հայաստանում ճամփորդական ծառայությունների հաշվեկշիռը բացասական է (58 մլն ԱՄՆ դոլար), իսկ Վրաստանում՝ դրական:
- Զբոսաշրջության ծավալները Վրաստանում շատ ավելի մեծ են Հայաստանի համեմատ (5.5 միլիոն մարդ 1.2 միլիոնի դիմաց):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

- Հայաստանից ճամփորդողների մոտ 25 տոկոսը մեկնել են Վրաստան (շուրջ 300 հազար մարդ):
- Հիմնական նպատակը՝ սևծովյան հանգստավայրերում ամառային հանգստի կազմակերպումն է:
- 2010-ին ընդամենը 100 հազար հայ զբոսաշրջիկ, իսկ միայն 2015-ի հուլիսին՝ 180 հազար (քաղաքացի):
- Վրաստանից Հայաստան է այցելել մոտ 300 հազար զբոսաշրջիկ կամ Հայաստան այցելած բոլոր զբոսաշրջիկների 26 տոկոսը:
- Վրաստանից Հայաստան ժամանածները հիմնականում հայեր են, հիմնական նպատակը՝ այցելություն հարազատներին:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Վրաստանից Հայաստան զբոսաշրջիկների բաշխվածությունն ըստ այցելության նպատակի, տոկոս



Աղբյուրը՝ 2013թ. ՀՀ սահմանային անցակետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքներ

2) ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՆԵՐՈՒԺԸ

- **Ապրանքների արտահանումը**

ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

- Փոխադարձ առևտուրը կարող է ընդլայնվել՝
  - արդեն իսկ արտահանվող և ներմուծվող ապրանքների ընդլայնման և
  - նոր արտադրատեսակների առևտրի զարգացման շնորհիվ:
- Գնահատման հիմքում դրված է հետևյալ ենթադրությունը.
  - փոխադարձ առևտուրն ընդլայնման ներուժ կարող է ունենալ այն ապրանքների գծով, որոնք մի երկրի կողմից արտադրվում և արտահանվում են երրորդ երկրներ, իսկ մյուս երկիրն ունի դրա պահանջարկը և ներկրում է երրորդ երկրներից:

ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

- Հայաստանի դեպք՝ կիրառված սահմանափակումների շրջանակ (ԱՏԳԱԱ 6-անիշ դասակարգման մակարդակ).

1. Դեպի երրորդ երկրներ ՀՀ արտահանումը վերջին 3 տարիներին միջին տարեկան գերազանցել է 500 հազար ԱՄՆ դոլարը,

2. Երրորդ երկրներից ՎՀ ներմուծումը վերջին 3 տարիներին միջին տարեկան գերազանցել է 500 հազար ԱՄՆ դոլարը,

3. ՀՀ-ից դեպի ՎՀ արտահանումը վերջին 3 տարիներին միջին հաշվով զիջել է տարեկան 50 հազար ԱՄՆ դոլարը:

- Արդյունքում՝ 30-40 ապրանքներ ընդամենը 280 մլն դոլարի առևտուր (տե՛ս ՀՏԶ 2015, աղյուսակ 39):

ԱՌԵՎՏՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆԵՐՈՒԺԸ

- **Կիրառված ստատիկ մոդելը ունի թերություններ.**
  - արտադրական կարողությունների դինամիկ փոփոխություններ,
  - գնային գործոններ և որակի չափորոշիչներ,
  - ապրանքների փոխարինելության հնարավորություններ և այլն:
- **Սակայն թույլ է տալիս եզրակացնել.**
  - ներուժը լիարժեք օգտագործված չէ,
  - ՀՀ արտահանումը կարող է զգալիորեն ընդլայնվել,
  - աճի ներուժ ունեն՝ ոսկերչությունը, ոչ թանկարժեք քարերի մշակման, գյուղատնտեսական և մշակող արդյունաբերության մի շարք ճյուղերը:

3) ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

- Հիմնական եզրահանգումների ամփոփում
- Հնարավորություններ և ռիսկեր
- Առաջարկություններ և բաց քննարկման թեմաներ

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

- Համագործակցության զարգացմանն ուղղված տարբեր ջանքեր են ներդրվել, սակայն տնտեսական համագործակցության առկա մակարդակը ցածր է:
- Տարածաշրջանում ստեղծված իրավիճակում Վրաստանը Հայաստանի համար ունի կենսական նշանակություն՝ որպես արտաքին աշխարհի հետ հաղորդակցման և առևտրի տարանցիկ կապուղի:
- Տարանցիկ երկրի դերը Վրաստանի համար ոչ միայն տնտեսական օգուտներ է ապահովում, այլ նաև ռազմավարական մեծ կարևորություն հաղորդում:

ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Հայ-վրացական համագործակցության ընլայնման համար կան որոշակի սահմանափակումներ և ռիսկեր.

1. **Անհամատեղելիությունն անվտանգային համակարգերի առումով**
2. **Տարաբնույթ տնտեսական ինտեգրացիոն գործընթացները**
3. **Կառուցվածքային փոփոխությունների պակասը**
4. **Երրորդ երկրների հետ շահերի բախումը**
5. **Ակտիվության պակասը և իներցիոն բնույթը**

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

1. Անհամատեղելիությունն անվտանգային համակարգերի առումով

- Վրաստանն իր կայունությունը և անվտանգությունը կապում է եվրոպական և արևմտյան անվտանգային համակարգերի հետ՝ ընդլայնելով Թուրքիայի և Ադրբեջանի հետ ռազմավարական համագործակցությունը:
- Հայաստանն իր անվտանագությունը կապում է Ռուսաստանի ռազմավարական գործընկերության հետ:
- Այս հանգամանքը ունի տնտեսական հետևանքներ, արդյունքում երկրները հայտնվել են տարբեր տարածաշրջանային խոշոր տնտեսական ինտեգրացիոն գործընթացներում:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

2. Տարաբնույթ տնտեսական ինտեգրացիոն համակարգերը

- 2014-ին Վրաստանը ստորագրեց ԵՄ Ասոցացման համաձայնագիրը և դրա մաս կազմող «ԽՀ ազատ առևտրի գոտու» վերաբերյալ համաձայնագիրը:
- 2015-ից Հայաստանն անդամակցեց ԵԱՏՄ-ին:
- Հայաստանի ԵԱՏՄ անդամակցության անցումային շրջանի ավարտից հետո հնարավոր են բացասական տնտեսական հետևանքներ և երրորդ երկրների հետ (և Վրաստանի) արտաքին առևտրի կրճատում:
  - բարձր մաքսատուքեր,
  - քաղաքականության նպատակների անհամատեղելիություն և այլն
- Վրաստանում առևտրի և արտադրության եվրոպական չափանիշների ներդրումը, իր հերթին, կարող է հանգեցնել Հայաստանի արտահանման համար տեխնիկական խոչընդոտների:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

- Քաղաքականություն մշակողները Հայաստանի ԵԱՏՄ անդամակցությունը տեսնում են որպես երրորդ երկրներից (այդ թվում Վրաստանից) ներդրումներ ներգրավելու հնարավորություն՝ ռուսական շուկա պարզեցված մուտք ապահովելու առումով:
- 2 երկրում էլ տնտեսական զարգացումը, ներդրումների և բարեկեցության աճը սահմանափակված են կառուցվածքային խնդիրներով:

3. Կառուցվածքային փոփոխությունների պակասը

- Նշված տնտեսական ինտեգրացիոն գործընթացները Հայաստանում և Վրաստանում չեն կարող յուրացվել և հանգեցնել օգուտների՝ առանց արդյունաբերական համակարգերի զարգացման, ներդրումների աճի և կառուցվածքային շեշտակի բարեփոխումների:
- Բարեփոխումների պակասը նաև երկկողմ հարաբերությունների զարգացման սահմանափակում է:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

4. Երրորդ երկրների հետ շահերի բախումը

- Երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացումը շատ դեպքերում կարող է չբխել տարածաշրջանի մյուս դերակատարների շահերից՝ առաջ բերելով սահմանափակումներ և խոչընդոտներ:
- Հայաստանից Վրաստան էլեկտրաէներգիայի արտահանման և իրանական գազի վերարտահանման հնարավորությունների սահմանափակման առումով ակնհայտ է ռուսական (և ոչ միայն) ազդեցությունը:
- Վրաստանում թուրքական և ադրբեջանական տնտեսական ազդեցության ընդլայնումը (նաև իրականացվող խոշորածավալ ներդրումների արդյունքում) երկարաժամկետում կարող է հանգեցնել հայկական ներդրումների, գործընկերության և առևտրի համար սահմանափակումների և խոչընդոտների:

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ՌԻՍԿԵՐ

5. Ակտիվության պակասը և իներցիոն բնույթը

- Չնայած ստեղծված ինստիտուցիոնալ դաշտին և միջպետական հարաբերություններին, հայ-վրացական տնտեսական հարաբերությունների զարգացումը ունի իներցիոն բնույթ:
- Շատ դեպքերում միջպետական համագործակցությունը սահմանափակվում է ընթացիկ խնդիրների շուրջ ծագող հարաբերությունների կարգավորմամբ և, ըստ էության, չի ընդգրկում առավել խորը՝ ռազմավարական համատեքստ և տարածաշրջանային ծրագրեր:
- Ոչ կառուցողական, ինչպես նաև ոչ ադեկվատ վերաբերմունքը և պահանջները, ակտիվ ինտեգրացիոն գործընթացների պակասը, սահմանափակումների և ռիսկերի թվում են:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆԵՐ

- Պատմական և սոցիալ-մշակութային միասնական տարածքը հայկական և վրացական հասարակությունների միջև փոխհարաբերությունների սերտացման և տնտեսական կապերի ընդլայնման համար բնական միջավայր է ապահովում:
- Հայաստանի համար Վրաստանի ռազմավարական նշանակությունը չափազանց մեծ է և մշտապես կարևոր:
- **Վրաստանը պետք է դիտարկվի որպես Հայաստանի գլխավոր տնտեսական գործընկեր:**
- Վրաստանի կարևորությունը և գլխավոր տնտեսական գործընկերոջ դերի գիտակցությունը պետք է բարձրանա համահայկական մակարդակ, պետք է ներդնել միասնական, հատուկ ջանքեր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆԵՐ

Քաղաքականության օրակարգում հատուկ կարևորություն պետք է ստանան.

1. Մարդկային շփումների ընդլայնումը.
   - հումանիտար և մշակութային ոլորտում համագործակցության զարգացում,
   - կրթական փոխանակման ծրագրերի ընդլյանում,
   - զբոսաշրջության զարգացում և համատեղ ծրագրերի իրականացում:
2. Վրացական ենթակառուցվածքներում հայկական գործոնի և ներդրումների ընդլայնումը.
   - սևծովյան նավահանգիստներում,
   - բեռնափոխադրող ընկերություններում և
   - այլ ենթակառույցներում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲԱՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆԵՐ

3. Հայաստանում համեմատաբար մրցակցային ոլորտների ընդլայնումը.
- բարձր տեխնոլոգիաներ, առողջապահություն և այլն,
- գյուղատնտեսության, քիմիայի և վերամշակող արդյունաբերության տարբեր ոլորտներ,

4. Վրացական գործոնի և շահերի շարունակական դիտարկումը

5. Վրաստանի համար Հայաստանի կարևորության աստճանական բարձրացումը
- կարևոր է Հայաստանում ֆիզիկական և ոչ ֆիզիկական ենթակառուցվածքների արդիականացումը (ներառյալ ճանապարհային):

6. Միասնական և համակարգված ինտեգրացիոն ծրագրի իրականացումը
- պետության և սփյուռքի համատեղ ջանքեր,
- ներդրումների և առևտրի աջակցությանն ուղղված ակտիվ քաղաքականություններ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

www.EDRC.am
info@edrc.am